ENERGY SAVING FOUNDATION
FOUNDATION TO SAVE ENERGY

ՀՀ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
պ-ն Դավիթ Խուդաթյանին

Էներգախնայողության աջակցման հիմնադրամի
տնօրեն տ-ն Աստղինե Պասոյանից
հեռ.+37493.611.619
էլ.փոստ. astghine@gmail.com

21.11.2025թ.

Հարգելի պարոն Խուդաթյան.

Խնդրում եմ ՏԿԵ նախարարին կից ձևավորվող հասարակական խորհրդի կազմում ընդգրկել Էներգախնայողության աջակցման հիմնադրամը: Խորհրդի կազմում հիմնադրամը կներկայացնի *գործադիր տնօրեն՝ Աստղինե Պասոյանը (Հեռ.՝ +37493.611619; Էլ. փոստ՝ astghine@gmail.com, անձնագիր #AV0637232):*

Էներգախնայողության Աջակցման Հիմնադրամ (ESF) կազմակերպությունը հիմնադրվել է 2003թ.-ին, ք. Երևանում, բայց գործում է ՀՀ ամբողջ տարածքում: Հիմնադրումից ի վեր աշխատել է մի շարք դոնոր և հասարակական կազմակերպությունների հետ՝ բարձրացնելու էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության, կանաչ տնտեսության խթանման ուղղությամբ հանրային քաղաքականության մշակման, համայնքային էներգակառավարման կարողությունների ստեղծման, նորարարական ֆինանսական լուծումների փորձարկման, հանրության իրազեկվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ:

Հիմնադրամը համախմբել է տնտեսագետների, բնապահպանների և ինժիներների, որը հնարավորություն է ստեղծում համատեղ գտնել ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կանաչ տնտեսական զարգացման խնդիրների համակարգային լուծումներ:

Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն են.

- Էներգաարդյունավետության (ԷԱ) և վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) ազգային ծրագրերի և գործողությունների պլանների մշակում
- Կայուն Համայնքային էներգետիկ և կլիմայական Պլանավորում, Կանաչ քաղաքի գործողությունների պլանների մշակում,
- Համայնքային ԷԱ, ՎԷ և կլիմայական հարմարվողականության նախագծերի մշակում, ֆինանսավորման ապահովում և իրագործում,
- Վերջին երեք տարիների ընթացքում ծրագրեր են իրականցվում Երևանում և Տավուշի, Գեղարքունիքի, Լոռվա և Շիրակի մարզերում: Ուսումնական ծրագրերում ներգրավում են մասնակիցներ բոլոր մարզերից: 2014թ.-ից Հիմնադրամը հանդիսանում է Քաղաքապետների Դաշնագրի աջակից կառույց:
- ՔՀԿ-ների կողմից հանրային քաղաքականության հարցերի շուրջը երկխոսության կազմակերպում, և այլն:

*Առդիր՝ 1) Պետռգիստրի գրանցման վկայական, կանոնադրություն, թեկնածուի անձնագիր*

Էներգախնայողության
Աջակցման
Հիմնադրամի տնօրեն Ա.Պասոյան

Address: Erebuni Plaza, Suite #414, Yerevan 0010, Armenia
info@esfarmenia.org | www.esfarmenia.org |+37493.611.619
State Registration #: 222.160.00218 | TIN 00081855